խանացն Վենետիկու, որ նոյն հրամանաւն կա-
ղող է ասա ի Վենետիկ և յամենայն տեղիս
գործածել զիւր արհեստն թարց խմիք ընդդի-
մութեան։ Եւ այսպէս սատմբայ սոնէթներով
և բուբլիքոյ հրամանաւն տարածեցաւ հռչակե-
ցաւ ի Վենետիկ բոլոր քաղաքն բարի համբա-
ւով և լուսարիսխմոյ գիգօլոյով Թոմազօ Թով-
մաճան մեսիքոյ քիրուրկոյ և օպոթեթրիքոյ
(վիրաբոյժ – մանկաբարձ)»։ 1788 Յուլիս 24ին
ուրիշ նուիրական օր մ'էր Հ. Յ. Թովմաճանի
համար. այդ օրը «ի վանս սրբոյն Ղազարու ե-
բանելի Մխիթարեան, ի ներկայութեան գերյար-
գելի Ստեփանոս Աբբայի և ամենայն միաբա-
նից, այլ եւս մեր Մարգէզէ տի Սերբոս Յով-
հաննէս աղային և սինեօր ապաթէ Ճիւզէփէ
Մարինովիկին՝ մատոյց զառաջին ամենասուրբ
պատարագն ի պատիւ երից անձանց ամենասուրբ
Երրորդութեանն, ծանր փառազուն զգեստուք
և շքաւոր կղերիկոսաք։ Եւ ի նմին աւուր եղեւ
մեծ սեղան ի սեղանատան... ուրախութիւն ի
վանս առ հասարակ մեծի և փոքու»։

1790ին կը գրէ. «Եւ մինչեւ ցայժմ խեղճ
Տէր Թովմաճան շնորհիւ Տեառն խաղաղացեալ
է ի մեծի խաղաղութեան ի վանս իւր քահա-
նայական սուրբ կարգին մխիթարութեամբն,
վասն որոյ զանչափ գոհութիւնս մատուցանէ
Տեառն մերոյ փրկչին բարերարին, որ է օրհ-
նեալ յաւիտեանս յաւիտենից ամէն»։ Այլուր
կը ծանօթագրէ ինքն իր համար 1803ին 86 ա-
մեայ «և նոյն քահանայութեամբն ապրի մինչեւ
ցայս ամ 1803 Նոյ. 15». կը վախճանի սբր-
բութեամբ 1806ին 90 ամեայ։

Զկրնալով զարգացնել իր նախնական ուսու-
մը բազմազբաղ կեանքին մէջ՝ իր լեզուն կը մնայ
ռամկօրէն և անհարթ, ոճը երկայնաբան՝ բայց
խառնուած իր զուարթ նկարագրով։

Զուարթ տպերու մը շարքէն զատ՝ որ իր
ծերունի հասակին մէջ յօրինած է վանական
համախմբութիւններու մէջ ոտնական առիթներով,
ունի նաեւ սրբազան – կրօնականներ, համեմա-
տաբար կոկուած լեզուով և ոճով, ուր կ'երեւի
իր զգայուն սիրտը, խոր հաւատքն ու բարե-
պաշտութիւնը. ատոնցմէ չորս հատ զետեղած է
իր կենսագրականին վերջը՝ էջ 515–521, նոտրա-
գիր մանր, երկսիւն, որոնցմէ երկուքը հոս կը
դնենք՝ Առ Տիրամայրն և առ Մխիթար Աբբա-
հայր իբրեւ նմոյշ. նկատելի է հոն Հ. Յ. Թով-
մաճանի խոր հաւատքի և բարեպաշտութեան
հետ իր փարումը Մխիթարայ Ուխտին՝ զոր քա-
նի մ'անգամ կորսնցնելու ցաւն և ապա վերստին
ստանալու մեծ մխիթարութիւնն ունեցած է։

Հ. Յովհաննէս իր գրական – կենսագրական
յիշատակարաններէն զատ նուէրներ ըրած է իր
սիրած Մխիթ. Ուխտին՝ և հոն կը պահուին
իրմէ. ա. Արծաթեայ յուշագիր մը՝ զոր ղրկած է
Հռոմէն 1754ին (էջ 131). բ. «Մեծ սէտէֆկեա-
բի խաչ մի՝ զոր գնեալ էր Յերուսաղէմ Թով-
մաճանն վասն յիշատակի վանաց Աբբային»,
1759ին (էջ 166). գ. Հնգկաստանէն վերադարձին
(1771) պարգեւս ընծայեաց. Հայր Աբբային՝ մի
պատուական կապուտ եագուէթ մատանի (յա-
կինթ). կարգաւորաց՝ զոմանս բանած սելեան
քար (սարդիոն) և զոմանս բանզէհիր (պէլծու-
վար). (316)։

Ասոնցմէ զատ վանքիս Թանգարանին մէջ կը
պահուին իրմէ. 1) «մին ծառ մրճամի (բուստ)
ի կարմիր ծովէ». 2). «Երկրորդն միեղջերուի
եղջիւրն». 3) «Երրորդն՝ ոնգեղջիւր»։

* *

Հ. Յ. Թովմաճանի գործը՝ որմէ այս անգամ
հատուած մը կու տանք այստեղ Եթովպիա կա-
տարած ուղեւորութեան և արքունի գանձապե-
տութեան, ըսինք թէ ոչքան թանկագին է գա-
բուն և անձերուն շուրջ տեղեկութիւններով։
Աւելցնենք նաեւ իր նպաստը Հայ Ազգագրա-
կան պատմութեան։ Զարմանալի չէր որ Ագոնց
իր Աշխարհագրութեան հատորներուն մէջ օգ-
տուէր թէ տեղագրութեան և թէ բարքերու մա-
նրամասնութիւններ այդ ակնատես վկայէն. ինչ-
պէս կ'ընէ ստուգիւ «Հապէշ» բաժնին մէջ։

Թովմաճանի գործը կարեւոր էջ մը կը բա-
նայ նաեւ Հայ – Եթովպական հինաւուրց յա-
բաբերութեան պատմութեան։ Ալիշան «Սիսա-
կան»ի «Հայք ՅԱֆրիկէ»ի «Եթովպիա» բաժնին
մէջ կը յիշէ յայտնապէս Թովմաճանը և կ'օգ-
տուի անկէ։ Եւ ստուգիւ մենք ալ իրմէ կը
տեղեկանանք թէ երբ 1762ին արքունի գանձա-
պետ կը կարգուի – և իրմէ յետոյ իր Պօղոս
որդին –, իրմէ առաջ Աբաբկիրցի մ'է եղեր
նոյն պաշտօնին վրայ՝ ուստա Սէլէֆ. և Թերեւս
անկէ առաջ ալ ուրիշ հայեր։

Հարկ չենք տեսներ մեկնութիւններ տալ ու-
ղեգրութեան. այնքան պարզ է լեզուն և նիւթը
գիւրըմբռնելի։

Հ. ԵՂԻՍ ՓԻՋԻԿԵԱՆ